Արձանագրություն N 3
«ՏԾԻԳ-ԲԸԾՁԲ-2016/2ՏՀ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «23» հունիսի2016թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Գասպարյան

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Ք. Քաբաբյան)

1. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում են՝ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի, «ՆՈ ՕՆԱ» ՍՊԸ-ի, «Քարազարթ» ՍՊԸ-ի և «Սահմանաշեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը,

բ) չեն համապատասխանում՝ «ԳԱԲՈԱՐՏ» ՍՊԸ-ի, «ԴԻ-ԱՐ-ԳԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի, «ԳԱՍ շենքերի ու կառույցների տեխ. հսկողություն» ՍՊԸ-ի և «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի ներկայացված հայտերը հետևյալ հիմնավորմամբ.

- «ԳԱԲՈԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի N 4 հավելվածում (գնային առաջարկ) նշված է «պարզեցված» ընթացակարգ, այնինչ սույն ընթացակարգը հանդիսանում է բաց ընթացակարգ, ինչպես նաև N 4 հավելվածում (գնային առաջարկ) ծառայությունը ներկայացված է, որպես աշխատանք, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, որտեղ հստակ սահմանված է ծառայությունների անվանումը:

- «ԴԻ-ԱՐ-ԳԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի N 4 հավելվածում (գնային առաջարկ) առաջարկված ընդհանուր գինը տառերով նշված չէ, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին,

- «ԳԱՍ շենքերի ու կառույցների տեխ. հսկողություն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի բոլոր հավելվածներում, մասնավորապես՝ գնային առաջարկի և տուժանքի մասին համաձայնության կից ներկայացվող վճարման պահանջագրում նշված է «ԳԱՍ շենքերի ու կառույցների տեխ. հսկողություն» ՍՊԸ, մինչ դեռ կազմակերպության իրավաբանական

- «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում տեղ է գտել անհամապատասխանություն: Մասնակիցը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ և հրավերով սահմանված պահանջների համաձայն չի ներկայացրել ֆինանսական միջոցների մասին համապատասխան հայտարարությունը (N 3.4 հավելված) սահմանված ձևով:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով և հրավերի I մասի 7-րդ կետի 7.3 ենթակետով սահմանված պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց.

- մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը,

- էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը,

- գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել 2016թ. հունիսի 27-ին ժամը 14:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ _____ Կ. Գասպարյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Մ. Գասպարյան